

ԲԱԺԱՆՈՒ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 ծր.  
Վեցամսայ 6 »  
Արտասահմանի ծա-  
մար Տարեկան 15 »  
Վեցամսայ 8 »  
Ստեփանյանի համար  
Տարեկան 1.50 »  
Վեցամսայ 0.80 »  
Ի տարբերակ ստացիկ  
գրքիս համար 40 սանթիմ  
և իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանթիմ և երեքին  
սանթիմ սնդակներու համար  
20 Օլո գեղջ կրկայ :

Վառճայի համար ձեռքի 10 սանթիմ

# ՇԱՌՓՈՒՆ

ՄԱՍԿՈՒ ԱՊՐԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)  
Պուշկարիոյ համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Redakция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)  
Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

## ՄԵԾ ԳԵԱՒՈՒՐՆԵՐԸ

Վաղուց, գեռ հայկական կո-  
տորածներ ժամանակ՝ Սուլթանը  
արամազրուծիւն ունէր մակե-  
ղոնանայիներին հայերիս բախ-  
տին արժանացնել, բայց նա  
քաջլուծ էր, որովհետեւ վա-  
խնում էր թէ Եւրոպան, մա-  
նաւանդ Ռուսաստանը Մակեդո-  
նիայի վերաբերմամբ այնպէս  
անտարբեր չեն գտնվի, ինչպէս  
Հայաստանի համար գտնվեցին :

Սուլթանը տեսնում էր թէ ինչ  
է կատարվում այնտեղ. ասում-  
ները կճրտացնում էր, իր կա-  
տաղութիւնը բաց կերպով չէր  
յայտնում, բայց սրտի խոր-  
քից միշտ մտածում էր. ախ թէ  
մի օր «Մեծ գեաւուրները» ինձ  
մի քիչ ազատ կը թողնեն, Մակե-  
ղոնիան էլ Հայաստանի օրը կը  
զցնամ :

Ու մեծ գեաւուրները, իսկա-  
պէս աշխարհիս «ամենամեծ  
գեաւուրը», Սուլթանին պատուի-  
րեցին խիստ միջոցներ ձեռք  
ստանել Մակեղոնիայի մէջ, պալ-  
քանների խաղաղութիւնը վրդա-  
վելու առաջին առնելու համար :

Սուլթանին էլ այդ էր հարկաւ-  
ւոր. նա շտապեց մեծ գեաւուր-  
ներին պատէրը կատարել այն  
արագութեամբ, որչափ դանդա-  
ղութեամբ մտածում է նոյն մեծ  
գեաւուրների պատէրներին,  
որոնք լինում են քրիստոնեանե-  
րի վիճակը բարւոքելու համար :

Ու Սուլթանն Համիտ խաղաղու-  
թիւնը վերահաստատում է Մա-  
կեղոնիայի մէջ. Բուլգար զար-  
գացած տարրով լցնում է բան-  
տերը և արտարվայրերը, գիւ-  
ղերը թալանում է, թուրք ամ-  
բոխը զինում է, որ յարմար ժա-  
մանակին կոտորածն էլ սկսել  
տայ :

Էլ ի՞նչ ենք ուզում Սուլթան  
Համիտից : Չէ որ Եւրոպան նրա-  
նից խաղաղութիւն է պահանջում,  
էլ ի՞նչ անի խեղճ Համիտը, մի-  
թէ ինքը մեղաւոր է. չէ որ նրա  
հասկացողութեամբ իր երկրի  
մէջ խաղաղութիւն հաստատել,  
նշանակում է քրիստոնեայ, իր

բռնութեան դէմ բողոքող տար-  
րին բնաջինջ անել : Եւ նա ջըն-  
ջում է :

Չէ, Սուլթանն Համիտը մեղա-  
ւոր չէ, և շատ արամաբանօրէն  
է գործում : Նա երբէք չի շեղ-  
վում իր նպատակից, ինչ էլ որ  
լինի այդ նպատակը :

Մեղաւոր են «մեծ գեաւուր-  
ները» Եւրոպայի պետերը. կեղծ  
գրութեան, հակասական տրա-  
մարանութեան մէջ ընկնողը նոյն-  
պէս այդ մեծ գեաւուրները են :

Մեր, Սուլթանի ճիրաններում  
տանջվող քրիստոնեաներիս թըր-  
նամին ինքը Սուլթանն Համիտը  
չէ, այլ մեծ գեաւուրները են  
որոնք Սուլթանին միշտ աջակ-  
ցում են մեղ կոտորելու, մեղ  
տանջելու, մեղ հալածելու, մեղ  
ջնջելու համար :

ՎԱՐՈ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Վ Ա Ռ Ն Ա Յ Ի Մ Է Չ

«Մշակոյի» 53րդ թուին մէջ  
տպուած է յարգելի Տօքթօր  
Ալէքսանտր Աթաբէկեանցի նա-  
մակը, որուն մէջ Տօքթօրը Վառ-  
նայի ազգային երկսեռ դպրոց-  
ներուն ի նպաստ տրուած պարա-  
հանդէսի մասին խօսելով ու ա-  
նոնց անապահով վիճակը նկա-  
րագրելով՝ կը շնչաւ թէ Վառ-  
նայի մէջ անհրաժեշտ է ունե-  
նալ միջնակարգ կեդրոնական  
դպրոց մը, որը ոչ միայն Պուլ-  
կարիոյ հայութեան համար պիտի  
օգտակար ըլլայ, այլև ամբողջ  
արասահմանի հայութեան հա-  
մար :

Յարգելի Տօքթօրը պուլկար  
ժիմնագները իբր օրինակ առնե-  
լով՝ կը յայտարարէ որ կեդրո-  
նական դպրոց մը հաստատելու և  
ապահովելու համար երկու հարիւր  
հազար ռուպլիի պէտքը կզգաց-  
ուի և այդպիսի գումար մը կու-  
կասի հայ կրէստները շատ գիւ-  
րութեամբ կրնան տալ :

Պուլկարիոյ մէջ կեդրոնական  
դպրոցի մը անհրաժեշտութիւնը  
շատ վաղուց է որ կզգացուի մաս-  
նաւոր շրջանակներու մէջ և, ե-

թէ չեմ սխալիր, նոյնիսկ տեղա-  
կան մամուլի մէջ ալ ակնարկներ  
եղած են այդ մասին, բայց մի-  
շեւ օրս ոչ ոք մտածած էր այդ  
խնդիրը կազմաւորելու մամուլի մէջ  
արծարծել :

Ամէն մարդու համար ալ ակն-  
յայտնի է թէ այդ տեսակ խնդրի  
մը կողմասեան մամուլի մէջ ար-  
ծարձուիլը մեծ կարեւորութիւն  
ունի, որովհետեւ հոն է որ աւելի  
հարուստ և մեծ նուէրներ ընելու  
պատրաստ և ընդունակ ազգա-  
յիններ ունինք :

Պուլկարիա ապրող հայերս կեդ-  
րոնական դպրոց մը հիմնելու  
անկարող ենք. նիւթակսն մի-  
ջոցներ մեզի կը պակսին այդ  
գեղեցիկ գործը գլուխ բերելու  
համար, ուստի ուրիշ տեղէ պիտի  
օգնութիւն ստանանք, և այդ օգ-  
նութիւնը մեզի ընելու միայն  
ուսաստան հարուստները ընդու-  
նակ են :

Կը շնորհատրենք Տօքթօր Ա-  
թաբէկեանցը իր բարձրացուցած  
խնդիրովը և կը յուսանք թէ կէս  
ճանապարհին չի պիտի մնայ և  
տեղական մամուլի մէջ մանրա-  
մասնօրէն իր կարծիքները կը  
պարզէ, որչափ կարելի է շու-  
տով գործնական հոշի վրայ դնե-  
լու համար Վառնայի կեդրոնա-  
կան դպրոցի խնդիրը :

Մենք կը յուսանք թէ Պուլկա-  
րիոյ մէջ պիտի գտնուին տեղացի  
հայեր, որոնք սիրով պիտի ա-  
ջակցին Պարոն Աթաբէկեանցի :

### ԸՆԿԵՐԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱՆ (DIE SOZIAL-ÖKONOMISCHE TÜRKEI)

(Շար. Ասխրոյ Իսիկ և Վերջ)

Ը. Գլուխին խորագիրն է «Վաճա-  
ռականութիւնը» որուն վրայ հեղի-  
նակները կարող եղած չեն բաւակա-  
նացուցիչ տեղեկութիւն տալ կանոնա-  
ւոր վիճակագրութեան մը պակասու-  
թեան պատճառաւ : Վաճառականու-  
թեան գլխաւոր կեդրոնին, Կ. Պոլսոյ,  
ներածութեան և արտածութեան  
քանակը չենք գիտեր : Իզմիր 1882ին  
ներածած է 116 1/2 միլիոն և արտա-  
ծած է 95 1/2 միլիոն ֆրանքի ապ-

րանք, Պրուսա 3000 մարդու զբա-  
ղում կը հայթայթէ իր մետաքսի  
մանարաններուն մէջ և 800 միլիոն  
ֆրանքով խաղող կարտադրին իր  
այգիները : Էնկիւրիւ 15 միլիոնի  
զանազան ապրանք կարտածէ տար-  
ուան մէջ գլխաւորապէս թիֆթիք,  
Սերաստիոյ, Սամսուի, Խարբերդի,  
Տիրապէքիի, Պաղատի, Գոնիայի և  
Ատանայի վրայ շատ կարճ տեղեկու-  
թիւններ տրուած են : Տրապիզոն  
1881ին արտածած ու ներածած է  
մօտ 67 1/2 միլիոն ֆրանքի ապրանք :  
Պէրութ 1895ին արտածած է 13 1/2  
միլիոնի մետաքս, և ներածած է  
մօտ 35 միլիոն ֆրանքի զանազան  
ապրանքներ :

Թուրքիոյ գրեթէ ամբողջ առեւ-  
տուրը կը գտնուի օտար հպատակե-  
րու և տեղացի քրիստոնեաներու  
ձեռքը : Իզմիրի նման մեծ հրապա-  
րակի մը վաճառականական գործու-  
նէութեան մասնակցող մանկական-  
ները հազիւ 20 հոգի կը հաշուուին :  
Նոյն համեմատութիւնը կայ  
գրեթէ միւր բոլոր քաղաքներուն  
մէջ : Թուրքիոյ մէջ գոյութիւն ու-  
նին ծաղկած վաճառականութեան մը  
համար հարկաւոր բոլոր տարրերը,  
որոնց զարգացման սակայն արգելք  
կըլլան միշտ միեւնոյն պատճառները,  
հաղորդակցութեան միջոցներուն  
չգոյութիւնը, հանրային անապա-  
հովութիւնը և հարկերու և մանա-  
ւանդ անոնց հաւաքման ծանօթ, սոս-  
կալի դրութիւնը. գերման հեղինակ  
մը, Շնէյտէր, կըսէ թէ Թուրքիա  
լաւ ընթացի մը ներքեւ պիտի կրնար  
արժանի հրապարակներուն վրայ  
մինչեւ իսկ Աւստրիայի հետ մրցիլ :  
Եւրոպական սէրութեանց և Թուր-  
քիոյ միջեւ կնքուած առեւտրական  
ղաշնագիրներու մասին կարճ տեղե-  
կութեամբ մը կը վերջանայ գրքոյ-  
կին այս գլուխը :

Թ. գլուխը, «Սուլթանը» խորա-  
գրով, կը յիշէ օսմանեան սահմա-  
նադրութեան ծագումը և վախճանը :  
Սուլթանները, իբրև խալիֆ, նկր-  
տած են պատերազմի կամ ապստամ-  
բութեան միջոցին, ազգիկ հեռաւոր  
երկրներու մանկական տարրին  
վրայ. այս պատահած է, օրինակ,  
կողկասի մէջ քանի մը անգամ : Սուլ-  
թանները միշտ կարեւորութիւն տւած  
են արտաքին փայլի և ճոխութեան  
որոնցով կարծած են իրենց հպատակ-  
ները շլացնել և իրենց հեղինակու-  
թիւնը բարձր պահել : Միշտ ծայրայեղ  
եղած են Սէրայիի շոտյութիւնները,  
նախարարները և ուրիշ բարձրաս-  
տիճան պաշտօնեաներ, իւրաքան-  
չիւրը իր կրցածին չափ, հետեւած են  
վիճակագրական շոտյութեան օրինա-  
կին, որ Թուրքիոյ անտեսական քաչ-

քայման պատճառներէն մէկն է: Արդի Սուլթանը, որուն օրով պետութեան պարտքը չորս միլիոն ֆր.ը անցաւ, քրիստոնեաներուն հալածանքները միայնակ եւ ջարդերը սխտեմադիք դարձան, 125 միլիոն ֆրանք կը ծախսէ իր պալատին համար որ 15000 հոգիէ բաղկացեալ քաղաք մըն է պարզապէս: Սուլթան Համիտ դիւրամբնելի պատճառներով իր կեանքին համար կը դողայ: Երկար անտիկ բերդ մըն է ուր գիշեր ցորեկ իր անձին պահովութեան համար երբեմն ողբերգական, երբեմն ծիծաղելի միջոցներ հնարելու ետեւէ է: Սուլթանը անուանապէս բացարձակ վեհապետ, սակայն խնայապէս ենթարկուած է գոտանի պատուէրներուն ու արամագրութիւններուն որոնք անոր իշխանութիւնը բաւական կը սահմանափակեն:

Ժ. Գլուխը կը խօսի թուրք վարչութեան վրայ որուն պաշտօնեաներու անազին մեծամասնութիւնը թուրքերէ բաղկացած է: Պաշտօնեաներն կը շարունակեն Սուլթանին, բայց ի մը եւն. հաճելի ըլլալուն համար կաշառքով կամ ուրիշ պատճառաւ. պաշտօնի գլուխ անցնելուն պէս իրենց առաջին հոգը կը լլայ դրամ ձեռք անցնել իրենց տուած կաշառքին տեղ, Ընդհանրապէս պաշտօնեաներուն ամսականը այնքան քիչ է որ բնաւ չի կրնար բաւել իրենց ծախքերուն, որոնց բացը կաշառք եւ պախիշի առնելով կը գոցեն: Կաշառակերութեան խտրութիւնը պաշտօնեաներու ու կորներուն ծուծը մտած է: Թուրք վարչութեան մէջ համեմատաբար րաւագոյն ճիւղն է թուրքան: Մաքսի, երկրագործական պանքային եւ բուսթայի վարչութիւններն են միայն որ երբեմն տեղեկագիր կը հրատարակեն իրենց գործունէութեան եւ պիտոճէին մասին:

ԺԱ. Գլուխը կը պարունակէ կարգ մը դիտողութիւններ հեղինակներու կողմէն, որոնք ցոյց կուտան մէկ կողմէն թէ թուրքիս իր արդի վիճակին մէջ դատապարտուած է անխուսափելի անկումի եւ թէ միւս կողմէն՝ երկիրը կարող էր բարգաւաճիլ ու միանգամայն Եւրոպայի համար պատուական շահաստան մը դառնալ, եթէ կանոնաւոր վարչութեամբ մը օժտուէր: Ասոր համար թուրքի մէջ եւրոպական դաղութներ հաստատելու գաղափարը գործնական չէ, որովհետեւ թուրք կառավարութիւնը միշտ անոր դէմ արգելքներ յարուցանել պիտի ջանայ: Բարենորոգումներու վրայ բացարձակապէս անկարելի է յոյս դնել: Թուրքը չուզեր եւ չի կրնար գործադրել իսկական բարենորոգումներ, թէեւ հանգիստաւոր խոստում տուած ըլլայ միջազգային դաշնագրերով եւ խաթիւր հիւմայուններով: Ուրեմն Եւրոպայի ուրիշ բան մը չի մնար ընել, բայց եթէ դադարիլ թուրքիս իրաց արդի վիճակին պահպանութիւնը պաշտպանելէ եւ ընդհակառակը անուղղակի կերպով օգնել քայքայում պատճառող ուժերուն զարգացմանը:

Պ. Թօթօմետնցի եւ Թօթեանի գրքովին պարունակութիւնը համառօտաբարցի անոր վրայ որոշ գաղափար մը տալու համար ընթերցողին: Հեղինակներուն նպատակն եղած է հայկական խնդիրը, անտեսական

տեսակետով դիտուած ներկայացնել գերմանացիներուն եւ ապացուցանել թէ անոնք նիւթապէս շատ պիտի շահէին հայերուն պահանջներուն: Բարենորոգումներու գործադրութեան ջատագով դառնալով: Գրական գերմանացիները մեր վիճակով շահագրգռելու այս եղանակը շատ բանաւոր է եւ հեղինակներուն աշխատասիրութիւնը գնահատումի արժանի: Սակայն ստիպուած եմ ցաւօք ըսել թէ գրքոյը հարկաւոր խնամքով խմբագրուած չէ: Նախ տեղի եւ ուրիշ յատուկ անուններու մէկ մասը աղաւաղուած է, երբեմն մինչեւ իսկ անճանաչելի դառնալու չափ: Թուրքիոյ մասին սխալ տեղեկութիւններ տրուած են, զորս ո եւ է քիչ շատ բանիմաց տածկահայ կրնար ցոյց տալ: Վերջապէս մինչեւ իսկ զիրար հակասող տեղեկութիւններ չեն պակսիր: Պէտք չեմ տեսներ սխալներէն օրինակներ հոս գնել ըսածս հաստատելու համար:

ԶԱԻԷՆ

ՌՈՒՍ ԳՐԱԿԵՏՆԵՐԻ ԲՈՂՈՒՄԸ

Մեծայարգ խմբագիր,

«Այսօր, մարտի 4ին, Պետերբուրգի Կազանեան մայր եկեղեցու մօտ, հազար հոգուց բաղկացած բաղումութեան աչքի առջեւ անպաշտպան մարդկանց արիւնը թափեցին նախամտածված եւ կանոնաւոր կերպով: Կողակները շրջապատեցին տաճարի առջեւ հաւաքված անպէս բաղումութիւնը եւ սկսեցին իրենց ձիւրով արորել եւ մտրակներով հարածել: Ժանտարմները յարձակվեցին անհատների վրա եւ իրենց կուռփներով ու մտրակներով ծեծեցին նրանց:

Ուժասպառ կանայք ինքնաբերաբար ոստիկանատան գնալով՝ կրկին բռնվեցին եւ նոր տանջանքների ենթարկվեցին: Մեծում էին եւ ընկածներին, մինչեւ նրանց ուշաթափ լինելը, նոյնիսկ մինչեւ մահանալը: Սրանք զանազան մարդկանց կողմից դիտուողութեամբ տարածված լուրերը չեն, այլ փաստեր՝ որոնք մեզինքն շատերը իրենց աչքերով տեսան:

Ժողովուրդը, որ աղաչում էր վերջ դնել այս արիւնային թեման՝ հալածվում էր. միջամտող սպաներին անգամ չը խնայեցին: Մեզինքն նրանք էլ որ նոյն աղաչանքը արին, բռնվեցին եւ ծեծվեցին:

Մենք վրդովված ենք այդ տեսակ անգթութիւնների դէմ, որոնց նմանը, ինչպէս իմանում ենք, տեղի են ունեցել եւ ուրիշ քաղաքներում: Մենք սարսափում ենք մտածելով մեր հայրենիքի ապագայի մասին, որը ընկած է կուռփի եւ մտրակի տակ: Մենք

(\*) Այս բողոքը ուղարկված Բերլինի ընկերվարական «Լորվարդո» թերթին:

լիովին համոզված ենք որ մեր գրչակից ընկերներն էլ, որոնք մեր մէջ չեն, նոյնպէս վրդովված ու սարսափած են եւ որ մեր այս զգացմունքները բաժանում են ուս հասարակութեան այն մտածող անդամները, որոնք մարդկային արժանապատւութեան գիտակցութիւնը ունեն եւ որոնց մէջ գեռ չէ շնջվել սէրը դէպի իր մերձաւորը:

Մեզինքն, գրագէտները, վաղուց խլված է այդ տեսակ պատահարների առաջը առնելու կարելիութիւնը՝ ժամանակին այդ տեսակ դժբախտութիւնները պարզելով: Մեզ համար անկարելի է մեր համոզումները հրատարակելով այս ծանր վիճակից դուրս գալու մի միջոց ցոյց տալ անհնարին է նոյնպէս կատարել մեր պարտականութիւնը դէպի հայրենիքը:

Այս թող փորձ լինի փաստերը հրատարակելու:

Ստորագրած են՝

45 Ռուս գրագէտներ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

Իսկիւ պէն կը գրեն «Էնֆօրմասիօն թերթին»:

«Այսօր կրկին Գոմանովէն 20ի չափ ուսուցիչ եւ կրօնաւոր բերին ու բանտ նետեցին: Կը մեղադրուին իշխանութեանը դիմադրելու յանցանքի մէջ, որ կը թարգմանուի թրքական ոստիկանի ապօրինութեանց դէմ դիմադրած են: Այդ տեսակ դիմադրութեան օրինակները այսօր Մակեդոնիոյ մէջ ամէն օր տեղի կունենան:

Իրիտմաբ պուլկարները կը գրգռեն եւ երբ ասոնք կը բողոքեն կեդրոնական իշխանութեան հրահանգուած այդ խստութիւններուն դէմ, իսկոյն իբր իշխանութեան դիմադրողներ կը ձերբակալուին եւ խստութեամբ կը պատժուին:

Ոստիկանութեան պետը, Տէրվիչ էֆէնտին՝ որ Վինիշկայի գործի մէջ հաշակուած է իր անգթութիւններով, խումբ խումբ զապթիէներով, արագաբար կը թռչի գիւղէ գիւղ, եւ ամէն օր խումբ խումբ վտանգաւոր յեղափոխականները՝ Լուկիւպ կը զրկէ: Լուր տարածուած է թէ ամ Տէրվիչ էֆէնտին, որ ելլալով զօրեղներու հետ կապեր ունի, իր գրգռիչ գործակալներու միջոցաւ վերջերս յայտնի քաղաքական սպանութիւնները ըրած է, որպէսզի կարողանայ իրեն ատելի պուլկար գրգռիչները հալածել: Ասոր ընթացքը լիովին կը համապատասխանէ վերջին քրտն տարուան թրքական քաղաքականութեան, որ բաղկացած էր շարք մը շար դաւադրութիւններէ եւ

և ուղղուած էր բեմն պուլկարութեան դէմ, երբեմն ալ սերպ քահանայ Սթոյքօ Իվանովիչի դէմ:

Այսօր Տէրվիչ էֆէնտին ոչ միայն ոստիկանութեան պետն է, այլ եւ ամենաբարձր դատաւորը այդ տեսակ «քաղաքական» յանցանքներու համար: Իսկ թէ իր պաշտօնը անխղճօրէն կը կատարէ, ատոր իբր փաստ կրնայ ծառայել այն, որ ինք 11 տարի առաջ աղքատ ու պարզ ոստիկան մըն էր, իսկ այսօր հսկայական հարստութեան մը տէր եղած է: Ու Եւրոպական քաղաքագէտները Տէրվիչ էֆէնտինի եւ իր նմաններուն յանձնած են Մակեդոնիան իր բնակիչներով խաղաղութիւնն եւ կարգը վերահաստատելու համար:

Նոյն թերթին Սելանիկէն կը գրեն:

«Տեղական բնակիչներու խօսակցութեան նիւթը շարաթէ մը ի վեր կը կազմէ Ետի-Կուլէի մէջ բանտարկուած պուլկարներու կրած տանջանքները: Ասոնք ամէնքն ալ խոնաւ գետնափոր զնտաններու մէջ նետուած են եւ 48 ժամը անգամ մը պատառ մը հաց կընդունին: Ազգականներուն իրաւունք չէ տրուած բանտարկեալներուն այցելել. իրենց փաստաբաններուն անգամ մինչեւ օրս արտօնուած չէ տեսակցիլ, եւ ինչպէս կը լսուի մինչեւ դատի օրն ալ չը պիտի տեսակցին:

Ստամբուլ քահանան, որ ամենէն սուալ ձերբակալուած է շատ հիւանդ է, բայց քովը բժիշկ չեն թողուր: Ասոր ազգականները հեռագրով Պոլիս, արդարադատութեան նախարարին դիմեր են որպէսզի թոյլ տրուի հիւանդանոց մը տեղափոխել հիւանդը, բայց մինչեւ հիմայ պատասխան չէ ստացուած:

Բոլոր բանտարկեալները ստուկալի տանջանքներու կենթարկեն, մահաւանդ Տօքթ. Թաթարչէվը, զոր տանջանքով «խոստովանիլ» կատարեցին: Ամէն օր «յեղափոխականներու նոր խումբեր կը բերեն: Սթրումիլյայի մէջ գայմագամբամբող թուրք բնակչութիւնը զիներ է, առարկելով թէ պուլկար զնտուած հրոսախրմբերու պատճառով իր դաւաճը անապահով վիճակի մէջ է: Հիւմակ թուրք աւաղակները կը թափառին ամբողջ գաւառի մէջ եւ ինչ որ տեսնան կը թուցնեն: Ամբողջ նահանգի քրիստոնեայ վարժարանները գոցուած են: Եարուհակ պահած վէնքեր կը փնտռեն: հակառակ անոր որ պուլկարները կը դիմանան բռնութիւններու եւ կը լուեն ամէն ապօրինութեանց հանգէպ, նորէն կը հալածուին իրենց «յեղափոխական ներքին համոզումներուն» համար:

Պուլկար « խռովարարները » խուճարեցի ֆոքր Ասիա կաքսորուին, ու երբ այդ թշուառներու դժբախտ կիները և պատկաները համարձակին գթութիւն խնդրել, թուրք և ալպանացի ամբոխը զանոնք կը քարկոծեն : Եւ զարմանալի չէ որ այս պայմաններու մէջ, տեղ տեղ ալ քրիստոնէաները զէնք առնեն և իրենց գոյքն ու կեանքը սուղ ծախեն այդ ֆանաթիկ յարձակողներուն դէմ :

ԱՄՈՒՅՆԱՅՈՂ ՃԻՉՈՒԻԹԸ

Կանգի համալսարանի բրոֆէսէօր հայր Ռէնար քսան տարի ճիզուրիթներու ընկերութեան մէջ մնալէ վերջ այսօր իր վերարկուն նետեր և ամուսնացեր է :

Այդ առթիւ բրոֆէսէօր Ռէնար նամակ մը զրկած է լրագիրներուն յայտարարելով որ այդ քայլը ըրած է ճշմարտութեան ծառայած ըլլալու նպատակով :

Այդ նամակի մէջը հետեւեալը կըսէ բրոֆէսէօր Ռէնար :

« Ես ամուսնութեան մէջ կը գտնամ այն խաղաղութիւնը և ուժը, որոնք ամէն մարդու համար անհրաժեշտ են կեանքի մէջ փառաւոր ու ճշմարտութեանը նուիրուած կալը մղելու :

« Եթէ իմ որոշումս չի քաջալերէք, բայց համոզուած եմ թէ աւելի պիտի համակրիք մարդու մը, որ կը փափաքի անկեղծ ըլլալ և պատուաւոր, քան թէ անհաւատարիմ քահանայի մը » :

Երանի թէ հայր Ռէնարի հետեւէին աշխարհի բոլոր կուսակիցոն հոգեւորականները և բնութեան օրէնքին բռնաբարումը աշխարհի մէջէն վերանար : Ինչ ծիւղ մը, անբարոյականացնող կեղծիք մըն է որ ոտքի տակ կուտայ բրոֆէսէօրը :

Գեկտ. 20 և յունվար 18 թուակիր նամակներով կրկին խնդրած եմ Ազգ. պատրիարքարանէն նոյնը — Հրաժարականիս ընդունուելը :

Յունվար 17ին եկայ Ֆրիլիպէ Այցելու հովիւ հայր Պաղճեանին որ ինձ խորհուրդ տուաւ երթալ և վերջին պատարագը մատուցանել, և օրհնութիւն տալ « Վրացացի » ու վերագառնալ :

Յետոյ ազգային պատրիարքարանը հրաժարական ընդունած, և խնդրոյս կարգադրութիւնը յանձնած էր Այցելու հովիւին, (յունվար 22 թուականաւ) :

Գալով ամսականներու խնդրոյն, որ ինձ դէմ փաստ կը բերուի, Սեպտ.— Գեկտ. չորս ամսականներ յունվար 5ին գանձած եմ :

Այնուհետեւ Ս. Պատրիարքի հրահանգին վրայ վճարուեցաւ մնացած մէկ ամսականաւ :

Նոյն աստի փետրվար 2ին Իսլիմիայի Տ. Յովհաննէս քահանան եկաւ Թ. Բաղարճը և ես ալ մեկնեցայ :

Մնալով աղօթարար ազգիս Գ. Մ. Վ. Գ. Նալպանեան

Յ. Գ.— Ահա իբր ապացոյց ներփակած եմ Ազգ. պատրիարքարանին և հայր Պաղճեանին, ու պատ. թաղ. խորհրդոյ զրկած զանազան նամակներուս պատճէներն [ \* ], և Ս. Պատրիարքի և հայր Պաղճեանին ինձ զրկած նամակներուն պատճէներն, ու թաղ. խորհրդոյ ինձ յանձնած պաշտօնական վկայագրի պատճէնը, որոց բնագիրն ալ հարկին կրնամ զրկել կամ ցոյց տալ :

Ուշագրութեան արժանի է թաղ. խորհրդոյ տուած վկայագրոյն մէջ սա նախագաւթութիւնը « պուքէրէ հիւսնի զիրաւէրի իլի իսթիֆայի մէմուրիէթ էյլէմ միշ օլտըրլարընտան » և այլն : Նոյն

խնդրեմ ձեր յարգելի լրագիրը որ իմ շնորհակալութիւնս հաղորդէ ամէնուն, և այն որ դէպի ինձ ուղղուած այգչափ համակրանքը այնքան չեմ վերագրեր իմ գործունէութեանս ազգեցութեանը՝ որչափ Սինոգի որոշումին, սբը այնքան « զգաստացուցիչ » ու « ժամանակին » էր :

Լիւ Թօլսթօ

ՍՈՒԼԹԱՆԻ ԳՕՄԻՍԵՐԸ ԵՒ ՊՈՒԼԿԱՐ ԿՍՈՒՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Սուլթանի Յօփիայի ներկայացուցիչը պուլկար կառավարութեան նօթաւ մը տուած էր Մակեդոնական գօմիթէն լուծելու և Պուլկարիայէն Մակեդոնիա Անցնող հրոսախմբերը արգիլելու համար :

Պուլկարիոյ արտաքին գործոց նախարարը նօթայով մը իսկոյն պատասխանած է թուրք քօմիսէր Մէլհամէի նօթային յայտարարելով թէ՛ Մակեդոնական գօմիթէն լուծել չէ կարելի որովհետեւ պուլկարական օրէնքները կը թոյլատրեն ընկերութիւններու գոյութիւնը Պուլկարիոյ մէջ, իսկ հրոսախմբերու մասին պուլկար կառավարութիւնը տեղեկութիւն չունի, և պատրաստ է միջամտել, եթէ յանցագործութեան որոշ դէպքեր պատահին :

Սուլթանի կառավարութիւնը քաջալերելով Եւրոպական դեսպաններու դրդումներէն ոչ միայն Մակեդոնիոյ մէջ ուղեց ջնջել պուլկար բողոքոյ տարրը, այլ այնչափ առաջ գնաց որ ազստ Պուլկարիոյ մէջ անգամ ուղեց ճնշումներ գործ դնել :

Անշուշտ պուլկար կառավարութեան տուած այս կարծ ու ազդու պատասխանը քիչ մը Սուլթանը կը զգաստացնէ :

Ինչպէս կերեւի Սուլթանը մտազած է որ Պուլկարիան աչտաւ երկիր մըն է և հոս Սուլթանը և իր ներկայացուցիչները չեն կրնար իրենց ուզած եղանակները ածել ու խաղալ :

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ՌՈՊԱՍԵՒ ԶԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Առաջին նիստ. — Համագումարի բացումը, ընտրութիւն բիւրօի, հաստատումն Օրակարգի, Համարատուութիւն կարգադրի յանձնաժողովի — Պ. Մ. Մալումեան :

Երկրորդ նիստ. — Հայերի վիճակը կովկասում — առաջարկ. Ժընէվի ուսանողները : Սորհրդածութիւններ հայ ժողովրդի ներկայի և ապագայի մասին — Դասախօսութիւն Պ. Լ. Աթաբէկեանի, Յիւրիսից :

Երրորդ նիստ. — Համակրութիւն Բրօ Արմենիային առաջարկ Դարձուցատի Լօզանի և Ժընէվի Ու. Կապ

Ռուսաստանի և Ամերիկայի Հայ ուսանողութեան հետ : Առաջարկ. Լօզանի Ուս. « Հայոց լեզուի խնդիրք » — Դասախօսութիւն Պ. Ա. Ահարօնեանի, Լօզանից :

« Հայ մօր կոչումը » — դասախօսութիւն Օր. Ն. Յակոբեանի — Ժընէվից :

Չորրորդ նիստ. — Համակրութիւն Մակեդոնական կօմիտէին առաջ. Ժընէվի ուսանողութեան : « Հայ վրացիական յարաբերութիւնները » — Դասախօս. Պ. Ս. Մալումեանի, Ժընէվից : « Ակնարկներ մեր պատմական դերի առիթով » — Պ. Տ. Իսախանեան, Բերլինից :

Հինգերորդ նիստ. — Հայդերերգի պահանջը, լայլէն ուսանողների հարցը : Նախաքուէի խնդիրը — առաջ. Դարձուցատի ուսանողների :

« Հայկական յեղափոխ. ֆակտորները և պրոպականտ » Դասախօսութիւն Յ. Իւզրաչեանի Ժընէվից :

Վեցերորդ նիստ. — Պատգամաւորների խնդիրը — առաջ. Բերլինի և Դարձուցատի ուսանողների : « Միութեան վերաբերումը դէպի հայ յեղափոխական գործը » — Դաս. Պ. Ղ. Տէր Ղազարեանի, Ժընէվից : « Բանաստեղծ Դուրեան » Դաս. Պ. Վ. Կարանդեանի, Լէյպցիգից : (Թէական)

Եօթերորդ նիստ. — Թրքահայ օրինորդները և բարձր. ուսումը — առաջ. Ժընէվի ուսանողներին : « Թրքահայերի արդէ գրականութիւնը » — Դաս. Պ. Մ. Բրուսայանի, Ժընէվից : « Հայ կնոջ դերը ընտանիքի և հասարակութեան մէջ » — Դաս. Օր. Ն. Չոհրաբեանի, Ժընէվից :

Ութերորդ նիստ. — Միութեան գործունէութեան ծրագիրը յառաջիկայ տարւայ համար — կարգադրի Յանձնադրովի ի կողմից : Նախահաշիւ :

« Երիտասարդ Հայաստան » — Դաս. Պ. Մ. Վարանդեանի, ներկայացուցիչ Դրօշակի խմբագրութեան :

Իններորդ նիստ. — « Միութեան » նշանի որոշումը : (Կանոն. յօդ. 29) : Ընտրութիւն կարգ. Յանձնաժողովի քաղաքի : Որոշումն յառաջիկայ (1902 թւի) համագումարի տեղի : Ընտրութիւն լիազօր կօմիտէի :

Համագումարի փակումը : Կարգադրի՝ Յանձնաժողով Ժընէվ 1901 Մարտ :

Յ. Գ. — Ի գիտութիւն Միութեան անդամների :

- 1. Պատգամաւորները ինչպէս և եկող անդամները, պէտք է աշխատեն լինել Միութեան ապրիլի մէկին երբ նշանակւած է համագումարի բացումը :
- 2. Այն պատգամաւորները, որոնց ընտրեալները միջոց չունեն, ճանապարհածախք ստանում են կարգ. յանձնաժողովից Միւնիխում :
- 3. Նոր առաջարկները և դասախօսութիւնները կը մտցվեն արտակարգի յաւելւածի մէջ :
- 4. Միւնիխի մեր ընկերներից կազմուած է մի կօմիտէ, եկողներին ընդունելու և զիրութիւններ տալու համար :

Միւնիխի կօմիտէի հասցէն է՝

H. Agasser Schttadzu stausse 105 III Munich (Allemanagne) այս հասցէով պէտք է ուղարկել համագումարին ուղղուած գրութիւնները :

5. Համագումարը կը տեւի մի քառօր :

ՆՈՅՆ

ԹՕԼՍԹՕՅԻ ԵՆՈՐՀԱՍԱԼՈՒԹԵԱՆ ԶԱՅՈՒՄԱԿԸ

Պերլինի « Տէր վօրվարձ » թերթը թօլսթօյի հետեւեալ շնորհակալութեան նամակը հրատարակած է, որովհետեւ ուսական թերթերու մէջ կարելի չէ տպել :

« Պարոն խմբագիր ! հնարաւորութիւն չունենալով շնորհակալութիւնս յայտնելու բոլոր անոնց — բարձր պաշտօնեաներէ սկսեալ մինչեւ յետին գործաւորը — ոյնք թէ նամակներով և թէ հեռագիրներով իրենց դէպի ինձ տածած համակրանքը յայտնեցին փետրուար 22ին Սինոգի տուած որոշումին առթիւ, կը

[ \* ] Պատճէները խմբագրութեանս քով են :

Սօֆիայի մէջ անցեալ օր տեսնուեց Ե Մակեդոնական Գոմիթէի ներկայացուցիչ Պ. Ա. թանաս Մուրջեւի գասը. Մուրջեւ կը մեղադրուէր բռնութեամբ գրամ պահանջելու մէջ:

Այդ դատի մանրամասնութիւններուն մէջ չի պիտի մտնանք, միայն այսչափը կրնանք ըսել որ այդ քանի մը մեղադրողները չը կրցին ապացուցանել որ Պ. Մուրջեւ բռնի դրամ պահանջած է. Թէեւ գատախաղը պահանջած է որ Մուրջեւ պատժուի. բայց դատարանները արդարացուցեցին:

Ամբողջ պուլկար հասարակութիւնը սրտատրոփ կը սպասէր այդ դատի վերջին, և կը յուսար թէ Մուրջեւ պիտի անպարտ արձակուի. Այս պուլկար ժողովրդին յոյսը արգարացաւ. պուլկար դատարանը Մուրջեւը արգարացուց:

ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՒՆՈՒԹԵԱՆՑ ԶՈՂՆԵՐԸ

Մոսկուայի մէջ սպաննուած են 17 հոգի. որոնցմէ 7ը կին են, և վերաորուած 30 հոգի:

Ինթերսպուրկի մէջ սպաննուած են 11 հոգի, որոնցմէ 3ը կին, և վերաորուած 22 հոգի:

Գիւլի մէջ սպաննուած են 2 հոգի:

Չերքակալուածներու ճիշդ հաշիւը դեռ յայտնի չէ, Մոսկուայի, Խարկովի, Օտեսայի, Տօրպատի, Ռիկայի և Գիւլի ուսանողները հրաժարած են դասախօսութեանց երթալ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հաստատ աղբիւրէ կը տեսնուանք որ Վառնայի մէջ Դաշնակցականները կը քրքրուին գումար մը հանգանակած են շաբաթուան մը մէջ և դեռ հանգանակելու վրայ են. ուրախալին այն է որ դրամ տուողներէն շատերը նոյնիսկ դիմումի չեն սպասեր և իրենք կը բերեն կը յանձնեն իրենց սրտէն ըզխածը. Ինչպէս կերելի Վառնայի նուիրելու ընդունակ հայ հասարակութիւնը միայն Դաշնակցականները կը ճանչնայ իբր կազմակերպութիւն մը ու բոլորովին ազդուած չէ զանազան «օջիւնպազ տաուլճիներէ»:

Նոյնպէս հաստատ աղբիւրներէ կիմանանք թէ Ռուսոնքի հայերն ալ ասկէ ամիս մը առաջ կարեւոր գումար մը Դաշնակցութեան նուիրեցին:

— Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին

ինպատ պարահանդէսը կատարուեց և 8—900 լիրայի չափ հասոյթ ստացուեց:

— Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը ընդունած է մանչերու որբանոցին համար տօքթ. Տաղաւարեանի առաջարկած երկրորդ օրով զստընթացքի ծրագիրը, և հրամայած է անմիջապէս դասերը սկսիլ:

Չորս երկրագործ ուսուցիչներ պաշտօնի պիտի կոչուին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը իմանալով որ Լօնտօնէն մասնաւոր պատուիրակութիւն մը պիտի գայ Վիքթորիայի մահը և էտուարտ թագաւորի գահը բարձրանալը յայտնելու, շնորհակալութեան հեռագիր մը ղրկած է անգլիական կառավարութեան:

— Սուրիայի մէջ Ռուսական փոստան թալանուելով ուս հիւպատոսը Գիմեր է Պէյրութի վալիին և գոհացում պահանջեր է. բայց վալիէն գոհացուցիչ պատասխան չտանալով հիւպատոսը խնդրեր է ուս գեասպանի միջամտութիւնը:

— Պոլսէն կը հաղորդեն թէ առաջնակարգ թօքթիլանաւ մը, Եէպպայի, շրջաբերութեան հանած միջոցին շոգիի խողովակներէն մին պայթեր է. երբք մեքենա գործներ և վեց հնչցպաններ ծանր կերպով այրուեցին. իսկ քանի մը մարդիկ ալ վիրաւորուեցին:

— Պոլսէն Վիէնայ հեռագրուած է որ Սուլթանի կեանքին զէմ կազմուած դատաբերութեան մը հեաքը գտեր են:

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Կայսրը յայտարարած է որ չի պիտի ստորագրէ Ռուսիոյ և Չինաստանի միջեւ կնքուելիք գաշնագիրը:

— Լօրտերու ժողովին մէջ Անգլիոյ արտաքին գործոց նախարարը յայտարարեց է որ ինք տեղեկութիւն չունի թէ Չինաստանի և Ռուսիոյ միջեւ գաշնագրութիւն մը կնքուած ըլլայ, թէ անգլ. և գերման գաշնագրութեան երկրորդ յօդուածը Չինաստանի ամբողջութեան մասին՝ Մանչուրիոյ համար ալ գործադրելի է. թէ Ռուսիոյ և Չինաստանի գաշնագրութեան նկատմամբ ըսուածներուն նայելով, ատիկա այն տեսակ յանձնառութիւններ կը պարունակէ որոնք կրնան Անգլիոյ իրաւունքներուն վրասել:

— Անգլիական և Ռուսական հրամանատարները Թիէնձինի խնդիրը կարգադրելու համար հետեւեալ կարգադրութիւնն ըրած են:

Անգլիական ժէնէրալ Պարրու պիտի յայտարարէ թէ Ռուսական դրօշին բռնաբարումը մասնաւոր նպատակով չէ եղած. ուսական սահմանազխին ձողերուն փոխադրութիւնը կատարուած է առանց Անգլիոյ զինուորական խնամութեան գիտութեան, սկըսուած աշխատութիւնները այն ժամանակ պիտի շարունակուին, երբ երկու կառավարութիւններուն միջեւ վերջնապէս կարգադրուի սեփականութեան իրաւունքին խնդիրը:

Վակաչ ուս զօրավարը պիտի յայտարարէ թէ Ռուսական պահպնելու անգլիականներուն հետ միեւնոյն ժամանակ ես պիտի քաշուին:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօթայի հետ բանակցութեանց անյաջող հետեւանքը Անգլիոյ երեսփոխաններէն ոմանք կը վերադրէին Թրանսիլի կուսակալ Միլների խառնուելուն և կը պահանջէին անոս հեռացումը իր պաշտօնէն:

Չէմպրլէն երեսփոխանական ժողովի մէջ յայտարարեց է որ կառավարութիւնը մտադիր չէ Միլները պաշտօնանկ ընել:

— Լօրտ Գիշնէր Լօնտօն հեռագրած է թէ՛ Պապինքիօնի գունտը յարձակելով պօէր զօրավար Տէլարէի հրամանատարութեան տակ գտնուած 800 պօէրն ընտ վրայ, բորովին ջախջախեց է զանոնք, աւեր է երկու գաշտային թնդանթ 320 զէնք, մէկ ֆօմիօմ թնդանթ, 6 Մաքսիմ, 15000 Գարթէչ, 160 հրացան, 53 մեծ և 24 փոքր սայլեր, և 140 պօէր գերի բռններ են:

— Տուէթ պօէր ժէնէրալը Վալ գետը անցեր է Տըվիլիէրստորբի մօտ, կը կարծուի թէ բազմաթիւ թրանսիլիցիներ պիտի միանան պօէր զօրախումբերուն:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Ակուինալտօի գերի բռնուիլը մեծ ուրախութիւն պատճառած է ամերիկացիներու. լրագիրները կը գովեն Ակուինալտօի քաջութիւնը:

Ժէնէրալ Արթիւր կը հեռագրէ որ թերեւս Ակուինալտօ շրջաբերականով մը Ֆիլիպպինցիները հրաւրէ զինթափ ըլլալ և Ամերիկայի գերիշխանութիւնը ընդունիլ:

Ամերիկեան կառավարութիւնը կը յայտարարէ որ Ակուինալտօ հետ խստութեամբ չի պիտի վարուի:

Ամերիկա Տէվէյ կը կարծէ որ Ակուինալտօի գերի բռնուելով պատերազմը չի վերջանար Ֆիլիպպինցիներու մէջ:

Ամերիկայի չը հպատակուող Ֆիլիպպինցիներու զօրավար Ակուինալտօ իր ամբողջ սպայակոյտով գերի ինկեր է ամերիկացիներու ձեռքը:

Ակուինալտօ ամերիկեան զրահաւորով մը տարուած է Մանիլա, և բանտը դրուած է:

Թ ԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Յաղալիկայ կիթակի գիշի մարտ 25 ժամը 8 1/2ին հայ զեռասանական խմբին կողմէ ըստ խնդրանաց ազգայնոց պիտի ներկայացուի «Տաւրոսի հերոսներ» կամ «Յուլթանակ Ձէյթունցուց»:

Իրական թատերախաղ երգախառն հինգ արարուած 3 պատկերով յորում պիտի յայտնուի կենդանի պատկեր մը. Գիտերը սովորական:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի Պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպանուած համար, ի նպատ այդ բազմակարգ հաստատութեան հրապարակ հանուած և մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սիկարի թղթէն հոս զրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ հասարակութեանն որ նախապատուութիւն տայ այս թղթին, թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար եւ թէ նպատած ըլլալու համար հարիւրաւոր խեղճերու հոգատարութեան զօնարին եւ բազմապահանջ գործին:

Գիմել Տիար Պիպերեանի վաճառատունը, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար, Տիպէք-Չէյմէ:

Գին 2.70 Ֆիլիպ

10—10

ՏՕՔԹ. ՍԻՄՈՆ ԳՈՒՅՈՒՄՅԱՆԻ Ի ՖԻԼԻՊԷ

Մանկարար՝ կնախաբոյժ և մասնագէտ միգային հիւանդութեան որ բաւական ժամանակ է վեր բարիկ կը գտնուէր վերոյիշեալ հիւանդութիւններու նորանոր դարմանները ուսուցիչներու համար. վերադարձած ու Ֆիլիպէ հաստատուած է պրոֆեսորի վրայ նամակատան ճիշդ գէմի փողօցին մէջ. Հիւանդ կընդունի ամեն օր ժամը 2—6 հինգ յարթի օրերը միեւնոյն ժամերուն միայն կրնէր ձրիաբար կը դարմանուին:

3—5

ОТГОВОРНИКЪ: Д-рЪ МѢГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.